ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051, armash.ararat@mta.gov.am

Ի Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 08

ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Ավագանին որոշում է հաստատել 2-րդ նիստը հետևյալ օրակարգով.

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Արմաշ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը /գոտևորման նախագիծը/ հաստատելու մասին:

2. Արմաշ համայնքի սեփականություն հանդիսացող գույքից առանձնացնելու և օտարելու մասին

3.Արմաշ համայնքի 2021թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ Կողմ
ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ Կողմ
ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ Կողմ
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ Կողմ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051, armash.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 7 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ/ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Արմաշ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը /գոտևորման նախագիծը/ համաձայն հավելվածի:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի ,,Հողերի օգտագործման սխեման /հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան/,, գծագրին /Այսուհետ՝ Գծագիր/ և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Արմաշ համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Ձև 1				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Գյուղատնտեսական հողերից	2.11		
			Էներգետիկայի,տրանսպորտի,կապի, կոմունալ ենթակ.օբ.	1.96
15	Վարելահող	1.04	Կոմունալ ենթակառուցվածք	1.04
17	արոտ	0.76	Կոմունալ ենթակառուցվածք	0.76
16	Այլ հողատեսքեր	0.15	Կոմունալ ենթակառուցվածք	0.15
18	Խաղողի այգի	0.015	Կապ /կապի կայան/	0.015
			Բնակավայրերի	0.15
19	Վարելահող	0.15	Հասարակական կառուցապատման	0.15
	Բնակավայրի հողերից	3.45		
			Բնակավայրերի	1.37
1	Ընդհանուր օգտագործման	0.12	Տնամերձ կառուցապատման	0.12
2	Ընդհանուր օգտագործման	0.05	Տնամերձ կառուցապատման	0.05
3	Ընդհանուր օգտագործման	0.09	Տնամերձ կառուցապատման	0.09
4	Ընդհանուր օգտագործման	0.10	Տնամերձ կառուցապատման	0.10
5	Ընդհանուր օգտագործման	0.08	Տնամերձ կառուցապատման	0.08
6	Ընդհանուր օգտագործման	0.07	Տնամերձ կառուցապատման	0.07
7	Ընդհանուր օգտագործման	0.26	Տնամերձ կառուցապատման	0.26
8	Ընդհանուր օգտագործման	0.17	Հասարակական կառուցապատման	0.17
9	Ընդհանուր օգտագործման	0.07	Հասարակական կառուցապատման	0.07
12	Այլ հողեր	0.33	Հասարակական կառուցապատման	0.33

13	Այլ հողեր	0.04	Հասարակական կառուցապատման	0.04
			Արդյունաբերական ,ընդերքօգտագործման և այլ արտ.նշանակության օբ.	2.08
10	Տնամերձ կառուցապատման	0.09	Պահեստարանների	0.09
14	Հասարակական կառուցապատման	1.51	Արդյունաբերության	1.51
11	Ընդհանուր օգտագործման	0.47	Պահեստարանների	0.47

3.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -5

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ

ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051, armash.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 10

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջով.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով առանձնացնելու և աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող՝

ա/ 0147 ծածկագրից 0.07673հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր 4800 դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով:

բ/ 0147 ծածկագրից 0.04160հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր 2600 դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով:

գ/ 0224 ծածկագրից 0.08598հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր 5400դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով

դ/ 0232 ծածկագրից 0.55093հա գյուղատնտեսական նշանակության անջրդի վարելահող 125400դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով

ե/ 0101-0003 ծածկագիրը կրող 0.92548հա գյուղատնտեսական նշանակության անջրդի վարելահող 210600դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով

զ/ 0101-0004 ծածկագիրը կրող 0.81056հա գյուղատնտեսական նշանակության անջրդի վարելահող 184500դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով

է/ 0231-0004 ծածկագրից 1.59754հա գյուղատնտեսական նշանակության անջրդի վարելահող 363500դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով

ը/ 0168 ծածկագրից 0.15614հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր 9800դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով

թ/ 0191-0004 ծածկագրից 0.3հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր 18800դրամ /կադաստրային արժեք/ մեկնարկային գնով

2. Հողերի օտարման մեկնարկային գինը սահմանել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով:

3. Աճուրդի կամ օտարման գործընթացը ավարտել 2021թվականի 2-րդ եռամսյակում:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ կողմ

ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ կողմ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ կողմ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051, armash.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 11

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով.

Արմաշ համայնքի պահուստային ֆոնդից հատկացնել,

1. ,,Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ,, գործառնական դասակարգման /բաժին 4, խումբ 1, դաս 1, ծրագիր 55/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5122 հոդվածի ծախսն ավելացնել 450.0 հազ. դրամով , ճշտված պլանը սահմանել 750.0 հազ. դրամ:

2. ,,Ջրային կառույցների պահպանում և շահագործում,, գործառնական դասակագրման /բաժին 6, խումբ 6, դաս 1, ծրագիր 55/ ծախսայիան ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածի ծախսն ավելացնել 500.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1500.0 հազ. դրամ:

3. ,, Սոց. անապահով անձանց,, գործառնական դասակարգման /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագիր 54/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածի ծախսն ավելացնել 250.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1950.0 հազ. դրամ

4. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 708,215.5հազ. դրամ:

5.Վարչական բյուջեից ֆոնդային բյուջե հատկացման պլանը սահմանել 21450,484.5հազ. դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ կողմ

ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ կողմ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ կողմ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ